

3324

ՏԱՐԻՒ

3 K 33
7-75

Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛ք

5K33 20 NOV 2009
Z-75
h. **USULԻՆ** **24 JUN 2005**

20 NOV 2009
ԱՐԺԵՐԵՐԱՏՎՈՒԴ
ՀԵՂԱՓՈԽԱՅԻԹՑՈՒՆԸ
ՑԵՎ ՌՈՒՍԿԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԵՐԻ
ՏԱԿՏԻԿԱՆ

ՊԵՏՀՐԱՏ—
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՑԱՆ ԲԱԺԻՆ
ՏԵՐԵՎԱՆ • 1938

05.08.2013

3324




5597
38

И. СТАЛИН

ОКТЯБРЬСКАЯ РЕВОЛЮЦИЯ
И ТАКТИКА РУССКИХ
КОММУНИСТОВ

Госиздат—

Отдел парт.-полит. литературы
Ереван



ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹ-
ԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈ-
ՄՈՒՆԻՍՏԱՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ

„Հոկտեմբերյան ռազմիներում“ գրքի առաջնաբառ

I

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ա բառացին կարդի յերեք հանգամանքը՝
ներ վորոշեցին այն համեմատական
հեշտությունը, վորով պրոլետարական
հեղափոխությանը Ռուսաստանում հա-
ջողվեց վշտել իմպերիալիզմի շղթանե-
րը և, այդպիսով, տապալել բուրժուա-
զիայի իշխանությունը:

Նախ՝ այն հանգամանքը, վոր Հոկ-
տեմբերյան հեղափոխությունն սկսվեց
յերկու հիմնական իմպերիալիստական
խմբերի՝ անդլո-ֆրանսական և ավս-
տրո-գերմանական խմբերի կատաղի



կովի ժամանակաշրջանում, յերբ այդ
խմբերը, զրադշած լինելով իրար դեմ
մահացու կոփի մղելով, վո՛չ ժաման
նակ ունեցին, վո՛չ եւ միջոցներ՝ լուրջ
ուշադրություն ավիրելու չոկտեմբե-
րյան հեղափոխության դեմ պայքարե-
լուն։ Այս հանդամանքը հոկտյական
նշանակություն ունեցավ չոկտեմբե-
րյան հեղափոխության համար, վորով-
հետեւ նա այդ հեղափոխությանը հաս-
րավորություն ավեց ուղարկործելու
գաժան ընդհարումներն իմպերիալիզմի
ներսում՝ իր ուժերն ամրացնելու և
կազմակերպելու համար։

Յերկրորդ՝ այն հանդամանքը, վոր
Հոկտեմբերյան հեղափոխությունն
ոկտից իմպերիալիստական պատերազ-
մի ընթացքում, յերբ պատերազմից
տանըված ու հաշտության ծարավի աշ-
խատավոր մասսաներին իրերի բուն իսկ
արամաբանությունը մոռեցրել եր պրո-
լետարական հեղափոխությանը, վորպես
պատերազմից գուրս գտնու միակ յել-
ն

քի։ Այս հանդամանքն ամենալուրջ նշա-
նակություն ունեցավ Զոկտեմբերյան
հեղափոխության համար, վորովհետեւ
նրա ձեռքը հաշտության հուժկու գոր-
ծեր ավեց, նրա համար հեշտացրեց
խորհրդային հեղաշրջումն առելի պա-
տերազմի վախճանի հետ միացնելու
հնարակությունը և, դրա չնորհիվ,
նրա համար ստեղծեց մասսայական
համակրանք ինչպես Արեմուտքում՝
բանվորների մէջ, այնպես եւ Արեկե-
քում՝ ճնշված ժողովուրդների մէջ։

Յերրորդ՝ բանվորական հուժկու
շարժման առկայությունը Յեղվոզա-
յում և հեղափոխական ճգնաժամի հա-
սունանալու փաստն Արեմուտքում ու
Արեկելում, ճգնաժամ, վոր ստեղծել
եր իմպերիալիստական յերկարամե
պատերազմը։ Այս հանդամանքն անդնա-
հատելի նշանակություն ունեցավ հե-
ղափոխության համար մոռւսաստանում,
վորովհետեւ նա մոռւսաստանից զուրս
հավատարիմ զանակիցներ առահօլեց

Հեղափոխության համար՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ ռուզլածնրա պայքարում։

Բայց բացի արտաքին կարգի հանդամանքներից, Հոկտեմբերյան հեղափոխությունն ուներ ելի մի ամբողջ շարք ներքին բարենպաստ պայմաններ, վորոնք հեշտացրին նրա համար հաղթությունը։

Այդ պայմաններից գլխավորները պետք են համարել հետեւալները։

Նախ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունն իր կողմում ուներ Ռուսաստանի բանկոր դաստիարակի հոկայտական մեծամասնության ամենատկանը աջակցությունը։

Յերկրորդ՝ նա վայելում եր անտարտակուսելի աջակցությունը գյուղացիական չքավորության ու զինվորների մեծամասնության, վորոնք ծարավի ելին հաշտության ու հողի։

Յերրորդ՝ նրա գլուխ եր անցած, վորպես դեկավար ուժ, մի այնպիսի

8

փորձված կուսակցություն, ինչպեսին բոլեսիկների կուսակցությունն եւ, վորոնութեղ ե վո'չ միայն իր փորձով ու տարիներով մշակված կարգապահությամբ, այլև աշխատավորական մասսաների հետ ունեցած ահազին կապերով։

Չորրորդ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունն իր առջև ուներ այնպիսի համեմատաբար հեշտ հաղթահարելի թշնամիներ, ինչպես են՝ ավելի կամ պակաս չափով թույլ ոսւսական բուքժուազիան, գյուղացիական «բունտերից» վերջնականապես բարոյալքված՝ կալվածտերերի դաստիարակը և պատերազմի ընթացքում բոլորովին սնանկացած համաճայնողական կուսակցությունները (մենչեկիների ու եսերների կուսակցությունները)։

Հինգերորդ՝ նա իր արամադրության տակ ուներ յերիտասարդ պետության ահազին տարածությունները, վորտեղ կարող եք աղատորեն մանելիքել, նա-

9

հանջել, յես իրազըությունն այդ եր
պահանջում, դադար առնել, ուժերը
հավաքել ե այլն:

Վեցերորդ՝ հակահեղափոխության
գեմ մղած իր պայքարում Հոկտեմբեռ
յան հեղափոխությունը կարող եր հու-
սաւ, վոր յերկրի ներսում առկա յեն
բավարար քանակով պարենավորման,
վառելիքի ու հումքի ռեսուրսներ:

Այս արտաքին ու ներքին հանդու-
մանքների զուղակցությունն ստեղծեց
այն յուրահատուկ իրազըությունը, վո-
րը վորոշեց Հոկտեմբերյան հեղափո-
խության հաղթության համեմատական
հեշտությունը:

Այս չի նշանակում, իհարկե, վոր
Հոկտեմբերյան հեղափոխությունը չու-
ներ իր մինուսները՝ արտաքին ու ներ-
քին իրազըության իմաստով: Ի՞նչ ար-
ժի, սրինակ, այնպիսի մի մինուս, ինչ-
պես Հոկտեմբերյան հեղափոխության
հայտնի միայնությունն ե; նրա կողքին
ու նրա հարևանությամբ խորհրդային

յերկրի բացակայությունը, յերկիր, վո-
րի վրա նա կարողանար հենվել: Ան-
տարակառությի յի, վոր ասպարաց հեղա-
փոխությունը, սրինակ՝ Գերմանիա-
յում, այս տեսակետից ավելի նպաս-
տավոր զրության մեջ կլինի, վորով-
հետեւ նա իրեն հարեան ունի իր ու-
ժով այնպիսի լուրջ մի խորհրդային
յերկիր, ինչպես մեր Խորհրդային Մի-
ությունն ե: Ել յես չեմ խսում Հոկ-
տեմբերյան հեղափոխության այնպիսի
մինուսի մասին, ինչպես պրոլետարա-
կան մեծամասնության բացակայու-
թյունն ե յերկրում:

Բայց այս մինուսները միայն ընդ-
դում են Հոկտեմբերյան հեղափոխու-
թյան ներքին ու արտաքին այն պայ-
մանների յուրաքինակության հակայա-
կան նշանակությունը, վորոնց մասին
վերը խոսվել ե:

Այդ յուրօրինակության մասին վուչ
մի բոպե չի կարելի մոռանալ: Նրա մա-
սին առանձնապես հարկավոր ե հիշել:

1923թվի աշնան դերմանական անցքեւ բը վերլուծելիս։ Նրա մասին ամենից առաջ պետք է հիշե ընկ. Տրոցկին, վորն անհիմն կերպով անառողիա յե կատարում Հոկտեմբերյան հեղափոխության ու Գերմանիայի հեղափոխության միջև և անզուսպ կերպով խարազանում է դերմանական կոմիտազգությանը՝ նրա իսկական ու յերեակայտական սխալների համար։

«Բուսաստանի համար,—ասում ե լենինը,—1917 թվի կոնկրետ, պատմականորեն չափազանց որիդինալ սիտուացիայում հեշտ եր սոցիալիստական հեղափոխություն սկսելը, մինչդեռ շարունակել այն և մինչև վերջը հասցնել Բուսաստանի համար ավելի դժվար կլինի, քան յելքուղական յերկրների համար։ Դեռևս 1918 թվականի սկզբին ինձ հարկ յեղակ մատնանշել այս հանդամանքը, և դրանից հե-

տո յերկամյա փորձը լիովին հաստատեց այսպիսի կցուագատության ճշությունը։ Այնպիսի սպեցիֆիկ պայմանները, ինչպիսիներն են 1) խորհրդային հեղաշըռութը իմպերիալիստական պատերազմի վերջանալու հետ միացնելու հարավորությունը, մի պատերազմ, վոր աներեւակայելիորեն տանջել և բանվորներին ու դյուզացիներին և վերջացել և խորհրդային հեղաշըռն ման չնորհիլ. 2) իմպերիալիստական դիշատիչների յերկու համաշխարհորեն-հզոր խմբերի մահացու կոիվը վարոշ ժամանակով ոսկառութելու հետ հարավորությունը, խըմբեր, վորոնք չեյին կարող միանալ խորհրդային թշնամու դեմ. 3) համեմատաբար յերկարատև քաղաքացիական պատերազմին դիմանալու հարավորությունը, մասսամբ յերկրի հսկայական ծավալի ու հաղորդակցության վատ միջոցների

Հնորհհիվ. 4) այնպիսի խորրի բուրք-
ժուառ-դեմուկրատական հեղափոխա-
կան շարժման առկայությունը
դյուզացիության մեջ, վոր պրոլե-
տարիատի կուսակցությունը գյու-
ղացիների կուսակցությունից (սոց.-
հեղ. կուսակցությունից, վորը, իր
մեծամասնությամբ, իրսու թշնամի
յի բոլցի իդմին) վերցրեց հեղափո-
խական պահանջները և մեկ անդամ-
մից իրավանացրեց զբանք՝ քաղա-
քական իշխանությունը պրոլետա-
րիատի կողմից նվաճված լինելու
չնորհհիվ.—այդպիսի սպեցիֆիկ պայ-
մաններ Արևմտյան Յելբողայում
այժմ չկան և այդպիսի կոմ զբանց
նման պայմանների կրկնվելը շատ
ել հեշտ բան չէ: Ահա թե ինչու,
ե միջի այլոց, —բացի մի շարք այլ
պատճառներից, —Արևմտյան Յելբո-
ղայի համար սոցիալիստական հե-
ղափոխություն սկսելն ավելի դըժ-

վար ե, քան մեղ համար» (տե՛ս
Հ. XXV, էջ 206—207):
ԼԵնինի այս խոսքերը չե կարելի մո-
ռանալ:

II


ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՅԵՐԿՈՒ ԱՌԱՋԱՀԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵ-
ՐԻ ՄԱՍԻՆ, ԿԱՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ՅԵՎ-
ԼՆԿ. ՏՐՈՑԿՈՒ ՊԵՐՄԱՆԵՆՏ ՀԵՂԱ-
ՓՈԽՈՒԹՅԱՆ ԹԵՌՈՒԱՆ

Գոյություն ունեն Հոկտեմբերյան
հեղափոխության յերկու առանձնահատ-
կություններ, վորոնց պարզելն անհրա-
ժեշտ է ամենից սուաջ. նրա համար,
վորպեսպի համանանք այդ հեղափո-
խության ներքին իմաստն ու պատմա-
կան նշանակությունը:

Այդ ի՞նչ առանձնահատկություններ
են:

Այդ նախ՝ այն փաստն է, վոր պրո-
լետարիատի դիկտատուրան մեզ մոտ
ծնվեց վորպես մի իշխանություն, վորը
ծագել է պրոլետարիատի ու դյուզա-
ցիության աշխատավոր մասսաների

դաշինքի հիմքի վրա, ընդուրում վեր-
ջինները դեկտարվում են պրոլետա-
րիատի կողմէց: Երկրորդ՝ այդ այն
փաստն է, վոր պրոլետարիատի դիկ-
տատուրան մեզ մոտ հաստատվել է
վորպես արդյունք սոցիալիզմի հաղ-
թության կապիտալիստորեն քիչ զար-
գացած մի յերկրում այն ժամանակ,
յերբ կապիտալիզմը պահպանվել է
մյուս, կապիտալիստորեն ավելի զար-
գացած, յերկրներում: Այդ չի նշանա-
կում, իսարկե, թե Հոկտեմբերյան հե-
ղափոխությունն ուրիշ սուանձնահատ-
կություններ չունի: Բայց մեզ համար
այժմ կարեսը են հենց այս յերկու
սուանձնահատկությունները վո՞չ միայն
այն պատճառով, վոր նրանք հստակո-
ւեն արտահայտում են Հոկտեմբերյան
հեղափոխության ելությունը, այլև այն
պատճառով, վոր նրանք հիմնալի կեր-
պով բացահայտում են «պերմանենտ
հեղափոխության» թեորիայի սովորու-
թիստական բնույթը:



Համառոտակի քննեհք այդ առանձանահատկությունները:

Քաղաքային ու զյուղական մանր բուրժուագիշի աշխատավոր մասսաների հարցը, այդ մասսաներին պրոլետարիատի կողմը նվաճելու հարցը պրոլետարիան հեղափոխության կարևորագույն հարցն է: Իշխանության համար մզկող պայքարում թե ո՞ւմ կաջակցեն քաղաքի ու զյուղի աշխատավոր մարդիկ՝ բուրժուագիշները, թե պրոլետարիան, նրանք ո՞ւմ սեղերվը կուսնան՝ բուրժուագիշները սեղերվը, թե պրոլետարիատի սեղերվը, — սրանից է կախված հեղափոխության բախտն ու պրոլետարիատի գիկտասուրայի հաստատուն մինելը: 48 և 71 թվականների հեղափոխությունները Ֆրանսիայում կործանվեցին զլիալորտես այն պատճեռով, վոր գյուղացիական սեղերվները բուրժուագիշների կողմը դանվեցին: Հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթեց այն պատճեռով, վոր կարողացավ

բաւրժուագիշից խլել նրա գյուղացիական սեղերվները, կարողացավ այդ սեղերվները նվաճել պրոլետարիատի կողմը, և այդ հեղափոխության մեջ պրոլետարիատը յեղավ քաղաքի ու զյուղի աշխատավոր մարդկանց միլիոնավոր մասսաների միակ ղեկավարող ուժը:

Ով չի հասկացել այս, նա յերբեք չի հասկանա վո՛չ Հոկտեմբերյան հեղափոխության բնույթը, վո՛չ պրոլետարիատի գիկտասուրայի բնությունը, վո՛չ ել մեր պրոլետարական իշխանության ներքին քաղաքականության յուրաքինակությունը:

Պրոլետարիատի գիկտասուրան սոսկական կառավարական մի վերնախավչե, վորը «վարպետորեն» «հատընթըրված» և «փորձված ստրատեղի» հոգատար ձեռքով և «խելացիորեն հենվում ե» բնակչության այս կամ այն խալերի վրա: Պրոլետարիատի գիկտասուրան պրոլետարիատի ու զյուղացիության

աշխատավոր մասսաների գասակարգացին դաշինքն ե՝ կապիտալի տանկարձան համար, սոցիալիզմի վերջնական հաղթության համար, պայմաննով, վոր այդ դաշինքի դեկապար ուժը պրոլետարիատն ե հանդիսանում:

Այսպիսով խոսքն այն մասին չէ այստեղ, վոր «մի քիչ» թերապնահատվեն, կամ «մի քիչ» գերազնահատվեն դյուզացիական շարժման հեղափոխական հնարավորությունները, ինչպես այժմ սիրում են արտահայտվել «պերմանենտ հեղափոխության» դիվանագիտական պաշտպաններից վորմանք: Խոսքը վերաբերում է Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով ծագած նոր պրոլետարական պետության բնույթյանը: Խոսքը վերաբերում է պրոլետարիատի իշխանության բնույթին, պրոլետարիատի բուն խոկ դիկտատորայի հիմունքներին:

«Պրոլետարիատի դիկտատուրան,
—ասում ե Լենինը, —աշխատավո-

լորության այլանդարդ պրոլետարիատի ու աշխատավորների վոչ-պրոլետարական բազմաթիվ խավերի (մանր բուրժուազիա, մանր տնտեսատիրուկներ, գյուղացիություն, ինտելիգենցիա և այլն), կամ նրանց մեծամասնության միջև կնքած դասակարգային դաշինքի հատուկ ձևն ե, —մի դաշինք, վորն ուղղված է կապիտալի դեմ, —դաշինք կապիտալը վիովին տապալելու, բուրժուազիայի դիմադրության և ռեստավրացիայի նրա կողմէց յեղած փորձերը վիովին ճնշելու նպատակով, դաշինք սոցիալիզմի վերջնական ստեղծման ու արացման նպատակով» (տե՛ս հատուք XXIV, էջ 311):

Յեկ այնուհետեւ.

«Պրոլետարիատի դիկտատուրան, յեթե այս լատինական, դիտական, պատմա-փիլիսոփայական արտա-

Հայուսությունը թարգմանենք այլեւի
պարզ լեզվով, ահա թե ինչ է
նշանակում. միայն վորոշ զաստ-
կարգ, այն ե՛ քաղաքային և առհա-
սարակ Փարբիկա-կործարանային,
արդյունարերական բանվորներն են
ի վիճակի զեկավարելու աշխատա-
վորների ու շահազարծվազների ամ-
բողջ մասսային՝ կապիտալի լծի տա-
պալման համար մզվող պայքա-
րում, բուն իսկ տապալման ըն-
թացքում, հաղթության պահպան-
ման ու ամբացման համար մզվող
պայքարում, նոր, սոցիալիստական
հասարակակարգ ստեղծելու գոր-
ծում, դասակարգերի լիակատար
վոչնչացման համար մզվող ամբողջ
պայքարում» (տե՛ս հ. ՏՏԿ, Եջ 336):

Այս ե պրոլետարիատի դիկտատու-
րայի այն թեորիան, վոր տվել և լե-
նինը:

Հակաեմբերյան հեղափոխության ա-
ռանձնահատկություններից մեկն այն
է, վոր այդ հեղափոխությունը պրոլե-
տարիատի դիկտատուրայի լենինյան
թեորիայի կլասիկ կիրառումն է:

Միքանի ընկերներ յենթադրում են,
թե այդ թեորիան զսւու «ռուսական»
թեորիա յե, վորը կազ ունի միայն
ուռասատանյան իրականության հետ:
Այդ ճիշտ չե: Այդ միանդամայն սիալ
է: Խոսելով պրոլետարիատի զեկավա-
րուծ վոչ-պրոլետարական դասակարգե-
րի աշխատավոր մասսաների մասին՝
լենինը նկատի ունի վո՞չ միայն ուռ-
ասական զյուղացիներին, այլև Խորհր-
դային Միության գեռես մոտ անցյա-
լում Ռուսաստանի գաղութներ ներ-
կայացնող ծայրամասերի՝ աշխատավո-
րական տարբերին: Լենինն անդադար
ողնդում եր, վոր Ռուսաստանի պրոլե-
տարիատն առանց այդ այլազգի մաս-
սաների հետ զաշինք կնքելու չի կա-
րգանա հաղթել: Ազդային հարցին

վերաբերող իր Հոգվածներում և Կո-
մինտերնի կոնցըեսներում արտասահնած
իր ճառերում Լենինը բաղմիշո ասել
է, վոր Համաշխարհային Հեղափոխու-
թյան Հաղթությունն անհնարին և ա-
ռանց առաջալոր յերկրների պրոլե-
տարիատի Հեղափոխական դաշինքի,
Հեղափոխական բլոկի՝ սարկացված
դաշտությունի ճնշված ժողովութզների
հետ։ Բայց ի՞նչ են դաշությունը, յեթե
վոչ նույն այդ ճնշված աշխատավոր
մասսաները, և ամենից առաջ դյուզա-
ցիության աշխատավոր մասսաները։
Ուժ հայանի չե, վոր դաշություների
աղատադրման հարցը, ըստ Եյուքյան,
վոչ—պրոլետարական դասակարգերի աշ-
խատավոր մասսաները Փինահսական
կապիտալի ճնշումից ու չահաղործու-
թից աղատելու հարցն ե։

Բայց սրանից հետեւմ և, վոր
պրոլետարիատի պիկտատուրայի լենի-
նյան թեորիան գուա «ուսւական»
թեորիա չե, այլ մի թեորիա յե, վորը

պարտադիր երանոր յերկրների հա-
մար։ Բոլշևիզմը միայն ուսւական
յերեւություն չե։ «Բոլշևիզմը», —ասում ե
լենինը, —«սակատիկայի տիպար երա-
նորի համար» (տե՛ս Հ. XXIII,
Էջ 386)։

Սրանք են Հոկտեմբերյան Հեղափո-
խության առաջին առանձնահատկու-
թյան բնորոշ զենքը։

Ի՞նչպես ե ընկ. Տրոցկու «պերմա-
նենու Հեղափոխության» թեորիայի
բանը Հոկտեմբերյան Հեղափոխության
այս առանձնահատկության տեսակե-
ափը։

Զենք բնդապակարտնի ընկ. Տրոց-
կու 1905 թվականի դիրքի մասին,
յերբ նա «պարզապես» մոռացել եր
դյուզացիության՝ վորովս Հեղափոխա-
կան ուժի՝ մասին, առաջադրելով
«առանց ցարի, իսկ կառավարությունը
բանվորական» լոգունզը, այսինքն՝
Հեղափոխության առանց դյուզացիու-
թյան՝ լոգունզը։ Նույնիսկ ընկ. Ռա-

դեկը, «պերմանենու հեղափոխության» այդ գիվանագիտական պաշտպանը, այժմ հարկադրված ե ընդունել, վոր «պերմանենու հեղափոխությունը» 1905 թվականին նշանակում եր իրականությունից «ցատկում զեպի ողը» (տե՛ս «Պրավդա», 1924 թվի զեկտեմբերի 14): Հիմա յերեք բոլորն ել ընդունում են, վոր այլևս չարժե զբաղվել այդ «ցատկումով զեպի ողը»:

Չենք ընդարձակարանի նաև ընկ. Տրոցկու՝ պատերազմի ժամանակաշրջանի, ասենք, 1915 թվականի, դիրքի մասին, յերբ նա իր «Պայքար իշխանության համար» հոգվածում, յենելով այն բանից, թե «մենք ապրում ենք իմպերիալիզմի դարաշրջանում», վոր իմպերիալիզմը «լո՛չ թե բուրժուական ազգն ե հակառակում հին ուժին», ոյլ որսութարիստը՝ բուրժուական ազգին», յեկավ այն յեղակացության, վոր զյուզացիության հեղափոխական դերը պետք ե նվազի, վոր

Հողի կոնֆիսկացիայի լողունղն արդեն չունի այն նշանակությունը, ինչ նա ուներ առաջներում (տե՛ս «1905 թվականը», Էջ 289—292): Հայտնի յէ, վոր իւնինը, քննություն առնելով ընկ. Տրոցկու այդ հոգվածը, այն ժամանակ մեղադրում եր նրան «զյուզացիության զերը» «Ժխուելու» համար, ասելով, վոր «Տրոցկին իրականում ողնում ե թուսաստանի լիրերալ բանվորական քաղաքագեաներին, վիրոնք զյուզացիության դերի «Ժխուելու» ասելով՝ հասկանում են հեղափոխության համար զյուզացիներին վոտքի հանել չցանկանալը» (տե՛ս Հ. XVIII, Էջ 318):

Ավելի լավ ե անցնենք այս հարցի վերաբերյալ ընկ. Տրոցկու ավելի ուշ ժամանակվա աշխատություններին, այն ժամանակաշրջանի աշխատություններին, յերբ պրոլետարական դիկտատուրան արդեն կարողացել եր հաստատվել և յերբ ընկ. Տրոցկին հնարավորու-

թյուն ուներ զործով ստուգելու «պերմանենտ հեղափոխության» իր թեորիան և ուղղելու իր սխալները։ Վերցնենք ընկ։ Տրոցկու «1905 թվականը» դրքի «Առաջարանը», վոր զբաժան և 1922 թվին։ Աչա թե ինչ և ասում ընկ։ Տրոցկին այդ «Առաջարանում» «պերմանենտ հեղափոխության» մասին։

«Հենց 1905 թվի հունվարի 9-ի և հոկտեմբերյան զործադրություններում ընկած ժամանակամիջուցում կազմակազմեցին հեղինակի այն հայացքները Բուռաստանի հեղափոխական զարգացման բնությի մասին, վորոնք ստացան «պերմանենտ հեղափոխության» թեորիա անունը։ Այդ խթթին անվանումն արտահայտում էր այն միտքը, թե ուստական հեղափոխությունը, վորի առաջ անմիջականորեն բուրժուական նորատակներ են կանոնած, չի կարողանա, սակայն,

կանգ առնել նրանց վրա։ Հեղափոխությունը չի կարողանա իր մերձակոր բուրժուական խնդիրները լուծել այլ կերպ, բայց յեթե իշխանության գլուխ կանգնեցնելով պրոլետարիատին։ Իսկ վերջինս, իշխանությունն իր ձեռքն առնելով, հեղափոխության մեջ չի կարողանա իրեն սահմանափակել բուրժուական ըրջանակներով։ Բնդհակառակը, չենց իր հաղթությունն ապահովելու համար հարկ կլինի, վոր պրոլետարիատին ավանդարդն իր տիրապետության առաջին իսկ պահին ամենախոր ներխուժումներ կատարի վո՛չ միայն Փեռզալական, այլև բուրժուական սեփականության մեջ։ Ընդումին նա քշնամական ընդհարութների մեջ կմտնի վո՛չ միայն բուրժուազիայի բոլոր խմբակումների հետ, վորոնք իրեն աջակցում ելին իր հեղափոխական պայքարի առաջին պահին,

այլև զյուղացիության լայն մասսաների հետ, վորոնց աջակցությամբ նա իշխանության և հասել: Գյուղացիական բնակչության ճնշող մեծամասնություն ունեցող հետամուց մի յերկրում բանվորական կառավարության դրության հակառակությունները կարող են իրենց լուծումը գանձել միայն միջազգային մասշաբառով, պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ասպարեզում» (տե՛ս ընկ. Տրոցկու «1905 թվականը» զրքել վերը չի շատակված «Առաջարանը» 1):

Այսպես ե ասում ընկ. Տրոցկին իր պարմանենու հեղափոխություն» թեորիայի մասին:

Բավական ե միայն բաղդասել այս ցիտատը կենինի յերկերից վերը բերված՝ պրոլետարիատի դիկտուրային

¹ Բնողջումն իմն ե: Ի. Ստ. :

վերաբերող ցիտատների հետ, վորպես զականանք այն ամբողջ անդաւնդը, զի համար այսպիսի լենինյան թեորիան ընկ. Տրոցկու պակրմանենու հեղափոխության» թեորիայից:

Կենինը խոսում ե պրոլետարիատի ու գյուղացիության աշխատավորական խավերի դաշինքի մասին, վորպես պրոլետարիատի դիկտուրայի հիմքի մասին: Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «ոլրոլետարական ավանդարդիք» «քշնամական ընդհարումներ» «գյուղացիության լայն մասսաների» հետ:

Կենինը խոսում ե պրոլետարիատի կողմից աշխատավորների ու չափագործվողների մասսաներին դեկապարելու մասին: Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «հակասություններ բանվորական կառավարության դրության մեջ՝ գյուղացիական բնակչության ճնշող մեծամասնություն ունեցող հետամուց մի

յերկում»:

Բատ Լենինի՝ հեղափոխությունն իր
ուժերը քաղում և ամենից պոտջ հենց
Ռուսաստանի բանվորների ու դյուզա-
ցիների միջից։ Իսկ Տրոցկու մոտ այն-
պես և դուրս գալիս, վոր անհրաժեշտ
ուժերը կարելի յե քաղել միայն «պրո-
լետարիատի համաշխարհային հեղափո-
խության ասպարեզում»։

Իսկ ի՞նչպես վարվենք, յեթե մի-
ջազդային հեղափոխությանը վիճակ-
ված և ուշացումով դալ։ Մեր հեղա-
փոխության համար լույսի վորեն
նշույլ կա՞ արդյոք։ Ընկ. Տրոցկին չի
տալիս լույսի վոչ մի նշույլ, վորով-
հետեւ «Հակասությունները բանվորա-
կան կառավարության գրության մեջ...
կկարողանան իրենց լուծումը դանել
միայն... պրոլետարիատի համաշխար-
հային հեղափոխության ասպարեզում»։
Բատ այս պլանի՝ մեր հեղափոխության
համար մնում և միայն մի հեռանկար.
Քարշ տալ իր գոյությունը սեփական

հակասությունների մեջ և արմատի
վրա փտել՝ համաշխարհային հեղափո-
խության սպասելով։

Ի՞նչ և պրոլետարիատի դիկտատու-
րան՝ ըստ Լենինի։

Պրոլետարիատի դիկտատուրան մի
իշխանություն ե, վոր հենվում և
պրոլետարիատի ու գյուղացիության
աշխատավոր մասսաների դաշինքի
վրա, վորը կնքված ե «կապիտալի
լիտկատար տապալման» համար, «սո-
ցիալիզմի վերջնական ստեղծման ու
ամրապնդման» համար։

Ի՞նչ և պրոլետարիատի դիկտատու-
րան՝ ըստ Տրոցկու։

Պրոլետարիատի դիկտատուրան մի
իշխանություն ե, վորը «թշնամական
ընդհարումների մեջ» և «մտնում «գյու-
ղացիության լայն մասսաների»» հետ և
«հակասությունների» լուծումը վորո-
նում և միայն «պրոլետարիատի համաշ-
խարհային հեղափոխության ասպարե-
զում»։

Ինչո՞վ ե տարրերվում «պերմանենու
հեղափոխության» այս «թերիան»
պրոլետարիատի դիկտատուրայի դադա-
փարի ժխտման վերաբերյալ մենչեւդմի
հայտնի թերիայից :

Բայտ եյության՝ վոչնչով:

Տարակույներն անհնարին են :
«Պերմանենու հեղափոխությունը» դյու-
զացիական շարժման հեղափոխական
հնարավորությունների սոսկական թե-
րագնահատություն չե : «Պերմանենու
հեղափոխությունը» գյուղացիական
շարժման մի այնպիսի թերագնահատու-
թյուն ե, վորը դեպի պրոլետարիատի
դիկտատուրայի լենինյան թերիայի
ծխտումն ե տանում :

Բնկ. Տրոցկու «պերմանենու հեղա-
փոխությունը» մենչեւդմի այլատեսա-
կությունն ե :

Այսպես ե բանք Հոկտեմբերյան հե-
ղափոխության տուաջին առանձնահատ-
կության վերաբերմամբ :

Վորոնչով են Հոկտեմբերյան ... հեղա-

փոխության յերկրորդ առանձնահատ-
կության բնորոշ գծերը :

Ուսումնասիրելով իմպերիալիզմը,
մանալանդ պատերազմի ժամանակաշըր-
ջանում, Լենինը հանդեց կապիտալիս-
տական յերկրների տնտեսական ու քա-
ղաքական զարգացման անհավասարա-
չափության, թուչքաձևության որևն-
քին : Բայտ այդ որենքի իմաստի՝ ձեռո-
նարկությունների, տրեստների, ար-
դյունաբնրության ճյուղերի ու առան-
ձին յերկրների զարգացումը կատար-
վում ե վո՛չ թե հավասարաչափ կեր-
պով, վո՛չ թե սահմանված հերթակա-
նության կարգով, վո՛չ թե այնպես,
վոր մի տրեստը, արդյունաբերության
մի ճյուղը կամ մի յերկիրն ամրող
ժամանակ առջելից գնան, իսկ մյուս
տրեստները կամ յերկրները հաջորդա-
կանորեն մեկը մյուսի հետեւից հետ
մնան, —այլ թուչքաձև, մի շարք յեր-
կըրների զարգացման մեջ տեղի ունե-
ցող ընդհատումներով ու մյուս յերկըր-

ների զարդացման մեջ տեղի ունե-
 ցող թոփչքներով դեպի՝ առաջ՝ Ընդ-
 սմին հետ մնացող յերկրների հին դեր-
 քերը պահպանելու «միանդամայն որի-
 նական» ձգտումը և առաջ ցատկած
 յերկրների՝ նոր դիրքեր զալթելու
 նույնքան «որինական» ձգտումն ունե-
 նում են այն հետևանքը, վոր իմպե-
 րիալիստական յերկրների պատերազմա-
 կան ընդհարումներն անխուսափելի ան-
 հրաժեշտություն են հանդիսանում։
 Այդպես պատահեց, որինակ, Գերմա-
 նիային, վորը կես դար առաջ, Ֆրան-
 սիայի ու Անդլիայի հետ համեմատած,
 մի հետամնաց յերկիր եր։ Նույն այդ
 բանը պետք է ասել Ճապոնիայի մա-
 սին՝ Ծուսաստանի հետ համեմատած։
 Սակայն հայտնի յե, վոր արդեն XX
 դարի սկզբին Գերմանիան ու Ճապո-
 նիան այնքան եյին առաջ ցատկել, վոր
 առաջինը կարողացել եր անցնել Ֆրան-
 սիայից ու սկսել եր նեղել Անդլիային

Համաշխարհային չուկայում, իսկ յերկ-
 րորդը՝ Ծուսաստանին։ Հենց այդ հա-
 կասություններից եւ, ինչպես հայտնի
 յե, ծագեց մոտ անցյալի իմպերիալիս-
 տական պատերազմը։

Այդ որենքը յելնում ե նրանից, վոր
 1) «կապիտալիզմը վերաճել ե մի
 լուս «առաջավոր» յերկրների կողմից
 յերկրագնդի բնակչության հսկայական
 մեծամասնությունը կաղութային ճշնչ-
 ման ու Փինանսական խեղդման յեն-
 թարկելու համաշխարհային սիստեմի»
 (տե՛ս Լենինի «Իմպերիալիզմի» ֆրան-
 սիրեն հրատարակության «առաջարանը,
 և. XIX, եջ 74)։

2) «Այդ «ավարի» բաժանումը կա-
 տարվում է համաշխարհութեն-հղոր, վո-
 տից-զլուկի դիմած յերկու-յերեք դի-
 չատիչների (Ամերիկա, Անգլիա, Ճա-
 պոնիա) միջև, վորոնք իրենց ավարը
 բաժանելու համար մղած իրենց պա-
 տերազմի մեջ են քաջում ամբողջ յեր-
 կրագունդը» (տե՛ս նույն աեղը)։

3) Հակասությունների աճումը Փիտ
նանսական ճնշման համաշխարհային
սիստեմի ներսում և ուղղմական ընդհառ
բուժների անխուսափելությունը տա-
նում են դեպի այն, վոր իմակերխալիզ-
մի համաշխարհային ճակատը հեղափո-
խության համար դառնում ե դյուրա-
խոցելի, իսկ այդ ճակատի ճնշքումն
առանձին յերկրների կողմից՝ հավանա-
կան:

4) Այդ ճնշքումն ամենից ավելի
հավանական կերպով կարող ե տեղի
ունենալ այն կետերում և այն յերկըր-
ներում, վորտեղ՝ իմակերխալիստական
ճակատի շղթան ալելի՝ թույլ ե, այ-
սինքն՝ վորտեղ՝ իմակերխալիզմն ամենից
քիչ ե կոփված, իսկ հեղափոխության
համար ծալվելն ամենից հեշտ ե:

5) Դրա համար ել սոցիալիզմի հաղ-
թությունը մի յերկրում, —յեթե այդ
յերկիրը նույնիսկ պակաս ե զարգացած
կապիտալիստորեն, իսկ կապիտալիզմը
սպահանվել է մյուս յերկրներում, յե-

թե այդ յերկրները կապիտալիստորեն
նույնիսկ ավելի յեն զարգացած, —լիո-
վին հարաբեր ե ու հավանական:

Սրանք են՝ յերկու խոսքով՝ ասած՝
պրոլետարական հեղափոխության լենի-
նյան թեորիայի հիմունքները:

Վո՞րն ե Հոկտեմբերյան հեղափո-
խության յերկրորդ առանձնահատկու-
թյունը:

Հոկտեմբերյան հեղափոխության
յերկրորդ առանձնահատկությունն այն
է, վոր այդ հեղափոխությունը պրոլե-
տարական հեղափոխության լենինյան
թեորիան սրակտիկայում կիրառելու
տիպարն ե:

Ով չի հասկացել Հոկտեմբերյան հե-
ղափոխության այս առանձնահատկու-
թյունը, նա յերբեք չի հասկանա վո՞չ
այդ հեղափոխության ինտերնացիոնալ
ընությունը, վո՞չ նրա միջազգային
հակայական հղուությունը, վո՞չ նրա
յուրօքինակ արտաքին քաղաքականու-
թյունը:

«Տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաչափությունը, ասում ե լենինը, —կապիտալիզմի անզայժանական որենքն է։ Այստեղից հետեւմ ե, վոր սոցիալիզմի հաղթությունը հնարավոր ե սկզբում միքանի կամ նույնիսկ մի՝ առանձին վերցրած՝ կապիտալիստական յերկրում։ Այդ յերկրի հաղթած պրոլետարիատը, եքսպրոլերիացիայի յենթարկելով կապիտալիստներին և իր յերկրում սոցիալիստական արտադրություն կազմակերպելով՝ վոտքի կելներ մնացած, կապիտալիստական աշխարհի դեմ՝ իր կողմը գրավելով մյուս յերկրների ճնշված դաստեղբերին, այդ յերկրներում առ պըստամբություն բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտության դեպքում նույնիսկ ռազմական ուժով՝ հանդես դալով շատ գագուլ շատործող դասակարգերի և նրանց

պետությունների դեմ»։ Վորովչեան «անհնարին» ե ազգերի ազատ միավորումը սոցիալիզմի մեջ առանց սոցիալիզմական հանրապետությունների չատ թե քիչ յերկարատե համառ պայքարի՝ հետամնաց պետությունների դեմ» (տե՛ս Հ. XVIII, եջ 232—233)։

Բոլոր յերկրների ոպորտունիստները պնդում են, թե պրոլետարիատն հեղափոխությունը կարող ե սկսվել—յեթե նա, ըստ նրանց թեորիայի, ընդհանրապես պետք ե վորեե տեղ սկսվել—միայն արդյունաբերականորեն զարգացած յերկրներում, թե վորքան ավելի յեն զարդացած այդ յերկրներն արդյունաբերական տեսակետից, այնքան պելի չանսեր կան սոցիալիզմի հաղթության համար, ընդվորում մի յերկրում, այն ել կապիտալիստորեն քիչ զարդացած յերկրում, սոցիալիզմի հաղթելու հնարավորությունը նրանք բա-

շառում են, իսրեւ միանդամայն անհաւ-
վանական մի բան։ Լենինը դեռևս պա-
տերազմի ժամանակ, հենվելով իմպե-
րիալիստական պետությունների անհա-
վասարաչափ զարգացման որենքի վրա,
ոպրտունիստներին հակադրում ե պրո-
լետարական հեղափոխության իր թեո-
րիան այն մասին, վոր սոցիալիզմը կա-
րող է հաղթել մի յերկրում, յեթե
նույնիսկ այդ յերկիրը կապիտալիստո-
րեն պակաս ե զարգացած։

Հայտնի յե, վոր Հոկտեմբերյան հե-
ղափոխությունն ամբողջապես հաստա-
տեց պրոլետարական հեղափոխության
լենինյան թեորիայի ճշտությունը։

Ի՞նչպես ե ընկ. Տրոցկու «պերմա-
նենտ հեղափոխության» բանը պրոլե-
տարական հեղափոխության լենինյան
թեորիայի տեսակետից։

Վերցնենք ընկ. Տրոցկու «Մեր հե-
ղափոխությունը» (1906թ.) բրոշյուրը։
Ընկ. Տրոցկին դրում է,

«Առանց յեվրոպական պրոլետա-
րիատի պետական ուղղակի աջակ-
ցության՝ Ռուսաստանի բանվոր
դասակարգը չի կարողանա իշխա-
նությունը պահել և իր ժամանա-
կավոր տիրապետությունը վերածել
յերկարատե սոցիալիստական դիկ-
տատուրայի։ Սրա նկատմամբ մի
բողոք անդամ չի կարելի կասկածել»
(Տե՛ս՝ «Մեր հեղափոխությունը»,
Եջ 278)։

Ինչի՞ մասին ե խոսում այս ցիտա-
տը։ Հենց այն մասին, վոր սոցիալիզ-
մի հաղթությունը մի յերկրում, տվյալ
դեպքում՝ Ռուսաստանում, անհնարին և
«առանց յեվրոպական պրոլետարիատի
պետական ուղղակի աջակցության»,
այսինքն մինչև յեվրոպական պրոլետա-
րիատի կողմից իշխանություն նվաճելը։

Ի՞նչ ընդհանուր բան կա այս «թեո-
րիայի» և լենինի այն գրութի միջև,
վոր հնարավոր ե սոցիալիզմի հաղթա-

նակը «մեկ՝ առանձին վերցրած՝ կա-
պիտալիստական յերկրում»:

Պարզ է, վոր այստեղ ընդհանուր
վոչինչ չկա:

Բայց յենթագրենք, թե ընկ. Տրոց-
կու այս բրոցյուրը, վոր հրատարակ-
վել և 1908 թվականին, յերբ դժվար եր
վորոշել մեր հեղափոխության բնույթը,
ոկամու սխալներ ե պարունակում ե
վոչ-լիովին ե համապատասխանում ընկ.
Տրոցկու ավելի ուշ ժամանակաշրջանի
հայացքներին: Քննության առնենք ընկ.
Տրոցկու մեկ ուրիշ բրոցյուրը, նրա
«Հաշորության ծրագիրը», վորը լույս ե
բնձարվել 1917 թ. Հոկտեմբերյան հե-
ղափոխության նախորյակին ե այժմ
(1924 թ.) վերահրատարակվել ե «1917»
դրամում: Այս բրոցյուրում ընկ. Տրոց-
կին քննադատում ե պրոլետարական
հեղափոխության լենինյան թեորիան մի
յերկրում սոցիալիզմի հաղթելու մա-
սին և նրան հակադրում ե Յելլոպայի
Միացյալ Նահանգների լողունդը: Նա

պնդում է, թե սոցիալիզմի հաղթու-
թյունը մի յերկրում անհնարին ե, թէ
սոցիալիզմի հաղթությունը հնարավոր
ե վորպես Յելլոպայի միավորված ու
Յելլոպայի Միացյալ Նահանգներ կաղ-
մած միքանի հիմնական յերկրների
(Անդլիա, Ռուսաստան, Գերմանիա)
հաղթություն միայն, կամ այդ հաղ-
թությունը բոլորովին անհնարին է:
Նա ուղղակի ասում է, վոր «Հաղթա-
կան հեղափոխությունը Ռուսաստանում
կամ Անդլիայում աներեւակայելի յետ-
ուանց Գերմանիայի հեղափոխության, և
ընդհակառակը» (տե՛ս «1917», ընկ.
Տրոցկու Յերկերի III հ., մ. I,
էջ 89):

«Պատմական փոքրիչատե կոնկրետ
միակ նկատառումը Միացյալ Նա-
հանգների լողունդի դեմ,—ասում
ե ընկ. Տրոցկին,—ձևակերպվել ե
շվեյցարական «Սոցիալ-դեմո-
կրատ»-ում (բոլշևիկների այն ժա-

մանակվլա կենտրոնական որդանը:
ի. Ստ. Հետեւյալ Փրազի մեջ.
«Տնտեսական ու քաղաքական դար-
դացման անհավասարաշափությունը
կապիտալիզմի անպայմանական ո-
րենքն ե»: «Սոցիալ-դեմոկրատն»
այստեղից անում եր այն հետեւու-
թյունը, վոր Հնարավոր ե սոցիս-
լիզմի հաղթությունը մի յերկրում
և վոր այդ պատճառով կարիք չկա-
պրոլետարիատի դիկտատուրան յու-
րաքանչյուր առանձին պետության
մեջ պայմանավորել Յեկրոպայի
Միացյալ Նահանգների ստեղծու-
մով: Վոր տարբեր յերկրների կա-
պիտալիստական զարդացումն ան-
հավասարաշափ ե, այդ միանդա-
մայն անվիճելի դատողություն ե:
Բայց այդ անհավասարաշափու-
թյունն ինքը միանդամայն անհա-
վասարաշափ ե: Անգլիայի, Ավստ-
րիայի, Գերմանիայի կամ Ֆրան-
սիայի կապիտալիստական մակար-

դակը միատեսակ չե: Բայց Աֆրի-
կայի ու Ասիայի հետ համեմատած՝
այդ բոլոր յերկրները ներկայաց-
նում են կապիտալիստական «Յեկ-
րոպա», վորը հասունացել ե սո-
ցիալական հեղափոխության հա-
մար: Վոր վո՛չ մի յերկիր եր
պայքարում չպետք ե «սպասի» ու-
րիշներին—այս տարրական մի ժիշտք
ե, վորն ոգտակար ու անհրաժեշտ
ե կրկնել, վորպեսզի զուգահեռ ին-
տերնացիոնալ գործողության դա-
զափարը չնենդափոխմի ինտերնա-
ցիոնալ սպասողական անդորդու-
թյան դաղափարով: Ուրիշներին
չսպասելով՝ մենք սկսում ե շարու-
նակում ենք պայքարն ազգային
հողի վրա, լիովին հավատացած
լինելով, վոր մեր նախաձեռնու-
թյունը զարկ կտա մյուս յերկրնե-
րում տեղի ունեցող պայքարին.
իսկ յեթե այդ տեղի չունենար, ա-
պա անհուսալի կլիներ կարծել—այս

են վկայում թե՛ պատմության
փորձը, թե՛ թեորիական նկատա-
ռումները, —լոր, որինակ, հեղա-
փոխական Ծուսաստանը կարող
կլինի դիմակայել ովահպանողական
Յելրոպայի հանդեպ, կամ սոցիա-
լիստական Գերմանիան կարող
կլինի մեկուսացած մնալ կապիտա-
լիստական աշխարհում» (տե՛ս ընկ-
ճրոցիու Յերկերի հ. III, մ. 1.
եջ 89—90):

Ինչպես տեսնում եք, մեր առջևն և
Յելրոպայի հիմնական յերկրներում
սոցիալիզմի միաժամանակ հաղթելու
նույն թեորիան, վորը, իբրև կանոն,
բացառում և հեղափոխության լինի-
րացառում և հեղափոխության լինի-
րացառում մի յերկրում սոցիա-
լիզմի հաղթելու մասին:

Ինչ խոսք, վոր սոցիալիզմի լիակա-
տար հաղթության համար, հին կար-
գերի վերականգնման դեմ լիակատար
յերաշխիք ունենալու համար անհրա-

ժեշտ են միքանի յերկրների պրոլետ-
արքների միահամուռ ջանքերը: Ինչ
խոսք, վոր առանց Յելրոպայի պրոլե-
տարիատի աջակցության մեր հեղափո-
խությանը, Ծուսաստանի պրոլետարիա-
տը չեր կարողանա դիմակայել (յստօ-
յթե) ընդհանուր ճնշմանը, ճիշտ այն-
պես, ինչպես և Արևմուտքի հեղափո-
խական շարժումն առանց Ծուսաստանի
հեղափոխության աջակցության չեր կտ-
րողանա զարգանալ այն տեմպով, վո-
րով նա սկսեց զարգանալ Ծուսաստա-
նում պրոլետարական դիկտատուրա
հաստատվելուց հետո: Ինչ խոսք, վոր
մեղ աջակցություն և հարկավոր: Բայց
ի՞նչ բան և արևմտայելրոպական պրո-
լետարիատի աջակցությունը մեր հեղա-
փոխությանը: Յելրոպական բանվորնե-
րի համակրանքը դեպի մեր հեղափո-
խությունը, նրանց պատրաստակամու-
թյունը՝ խափանելու իմպերիալիստնե-
րի՝ ինտերվենցիայի վերաբերյալ պլան-
ները—այս ամենն աշակցություն է

արդյոք, լուրջ ոգնություն եւ Անպայ-
ման՝ այսո՛: Առանց այլպիսի աջակցու-
թյան, առանց վո՞չ միայն յեվրոպական
բանվորների, այլէ գաղութային ու
կախյալ յերկրների այլպիսի աջակցու-
թյան, այդպիսի ոգնության՝ Բուևաս-
տանի պրոլետարական դիկտատորայի
բանը գժվար կլիներ: Արդյո՞ք մինչեւ
այժմ բավական ե յեղել այդ համա-
կրանքը և այդ ոգնությունը, վորո
միացած ե մեր Կարմիր բանակի հզո-
րության հետ և Բուևաստանի բանվոր-
ների ու գյուղացիների՝ սոցիալիստական
հայրենիքը կրծքով պաշտպանելու պատ-
րաստակամության հետ, — արդյո՞ք այս
տեսնը բավական ե յեղել, վորովովի
հետ մղնք իմպերիալիստների զրոհ-
ները և անհրաժեշտ պայմաններ նվա-
ճենք լուրջ շինարարական աշխատանքի
համար: Այսո՛, բավական ե յեղել: Այդ
համականքն աճո՞ւմ ե արդյոք, թէ
նվազում ե: Անպայման աճում ե: Այդ-
պիսով՝ մենք ունե՞նք արդյոք բարե-

նպաստ պայմաններ վո՞չ միայն նրա
համար, վորովովի առաջ շարժենք սո-
ցիալիստական տնտեսություն կազմա-
կերպելու դործը, այլև նրա համար,
վորովովի, մեր հերթին, աջակցու-
թյուն ցույց տանք ինչովես արեմտա-
յեվրոպական բանվորներին, այնպես ել
Արեկը ճնշված ժողովուրդներին:
Այսո՛, ունենք: Դրա մտսին պերճախոս
կերպով վկայում ե պրոլետարական
պիկտատուրայի յոթամյա պատմու-
թյունը Բուևաստանում: Կարելի՞ յե
արդյոք ժխտել, վոր աշխատանքային
հուժկու վերելքը մեղանում սկսվել և
արդեն: Վո՞չ, չի կարելի ժխտել:
Այս ամենից հետո ի՞նչ նշանակու-
թյուն կարող ե ունենալ ընկ. Տրոցկու
հայտարարությունն այն մասին, թէ
հեղափոխական Բուևաստանը չեր կա-
րողանա զիմակայել պահպանողական
Յեվրոպայի հանդեմ:

Դա կարող ե միայն մի նշանակու-
թյուն ունենալ. — նախ ընկ. Տրոցկին չի

զգում մեր հեղափոխության ներքին հղորությունը՝ յերկրորդ՝ ընկ. Տրոցին չի հասկանում այն բարոյական աջակցության անդնահատելի նշանակությունը, վոր մեր հեղափոխությանը ցույց են տալիս Արևմուտքի բանվորներն ու Արևելքի գյուղացիները. յերրորդ՝ ընկ. Տրոցին չի կարողանում ըմբռնել այն ներքին անկարությունը, վորը ներկայումս մաշում է իմպերիալիզմին:

Տարվելով պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի քննադատությամբ՝ ընկ. Տրոցին անակնկալորեն դիսովին ջախջախեց իրեն 1917 թվին լույս տեսած և 1924 թվին վերահրատարակված իր «Հաշտության ծրագիր» բրոյալում:

Բայց զուցե հնացել ե ընկ. Տրոցիու նաև ա՞յս ըրոշյուրը, վորեւ պատճառով դադարելով նրա այժմյան հայցքը ին համապատասխանելուց: Վերցնենք ընկ. Տրոցիու ալելի ուշ ժառ

մանակների աշխատությունները, վորոնք զրվել են այն ժամանակ, յերբ պրոլետարական հեղափոխությունը հաղթել եր մի յերկրում, Ռուսաստանում: Վերցնենք, որինակ, «Հաշտության ծրագիր» բրոյուրի նոր հրատարակության ընկ. Տրոցիու «Վերջաբանը», վոր կրված և 1922 թվականին: Ահա թե ինչ ե զրում նա այդ «Վերջաբանում».

««Հաշտության ծրագրում» միաքանի անգամ կրկնվող այն պնդումը, թե պրոլետարական հեղափոխությունը չի կարող հաղթականութեն ավագութել ազդյախն ընջանակներում, թերեւս, ընթեցողներից վոժանց համար հերքված թվամեր նորհրդային հանրապետության, համարյա հնգամյա փորձով: Բայց այդպիսի յեղբակացությունն անհիմն կլիներ: Այն փաստը, վոր ամբողջ աշխարհի դեմ բանվորական պետությունը կանգուն մնաց

մի յերկրում, այն եւ հետամնուց
մի յերկրում, վկայում ե պրոլո-
տարիատի հսկայական հղորության
մասին, վորն ուրիշ, ավելի առա-
ջապր, ավելի քաղաքակերթ յեր-
կըրներում ընդունակ կլինի հիբալի
հրաշքներ գործելու։ Բայց պաշտո-
պանելով ու պահպանելով մեզ քա-
ղաքական ու ռազմական իմաստով,
վորպես պետություն, մենք սոցիա-
լիստական հասարակության ստեղծ-
ման չհասանք և նույնիսկ չմոտե-
ցանք... Քանի դեռ մնացած յել-
րոպական պետություններում իշ-
խանության դլուխ կանգնած ե
բուրժուազիան, մենք պայքարելով
տնտեսական մեկուսացման դեմ՝
ստիպված ենք համաձայնություն
վորոնել կապիտալիստական աշխար-
հի հետ. միենույն ժամանակ կա-
րելի յե վստահ կերպով ասել, վոր
այդ համաձայնությունները, լավա-
գույն դեպքում, կարող են ոգնել մեզ

54

բժշկելու այս կամ այն տնտեսա-
կան վերքերը, անելու այս կամ
այն քայլը դեպի առաջ, բայց վոր
սոցիալիստական տնտեսության իս-
կական վերելքը նորաստանում
հնարավոր կղառնա Յեվրոպայի կա-
րերապարույն յերկրներում պրոլե-
տարիատի հաղթելուց հետո մի-
այն»¹ (աԵ՛ս ընկ. Տրոցկու Յեր-
կերի հ. III, մ. 1, էջ 92—93)։

Այսպես ե ասում ընկ. Տրոցկին՝
ակնհայտորեն մեղանչելով իրականու-
թյան դեմ և համառորեն ջանալով վըր-
կել «պերմանենտ հեղափոխությունը»
վերջնական կործանումից։

Դուրս ե գալիս, վոր ինչպես ել
չուռումուռ գաս, սոցիալիստական հա-
սարակության ստեղծման վո՛չ միայն
«չենք հասել», այլ մինչեւ անդամ
«չենք ել մոռեցել»։ Բանից դուրս ե

1 Բնդգծումն իմն և : Խ. Ստ. :

55

դալիս, վոր վոմանք «կապիտալիստական աշխարհի հետ համաձայնությունների դալու» հույս են ունեցել, բայց զարգում ե, վոր այդ համաձայնություններից նույնպես բան դուրս չի դալիս, վորովհետեւ, ինչպես ել շուռումում դաս, «սոցիալիստական տնտեսության իսկական վերելք» չես ստանա, մինչև վոր պրոլետարիատը չհաղթի «Յելբոպայի կարեռագույն յերկրներում»:

Այլ քանի վոր Արևմուտքում դեռևս հաղթություն չկա, ապա Բուռսաստանի հեղափոխության համար մնում ե «ընտըռություն անել»—կամ արմատի վրա վատեր, կամ վերասերվել չուրդուական պետության։

Զուր չե, վոր ընկ. Տըոցկին ահա արդեն յերկու տարի յե՝ խոսում ե մեր կուսակցության «վերասերման» մասին։

Զուր չե, վոր ընկ. Տըոցկին անցյալ

տարի մարդարեանում ել մեր յերկրի «կործանման» մասին։

Այս տարրորինակ «թեորիան» ի՞նչպես համաձայնեցնել «մի յերկրում սոցիսլիզմի հաղթության» վերաբերյալ լենինի թեսրիայի հետ։

Այս տարրորինակ «հեռանկարն» ի՞նչպես համաձայնեցնել լենինի այն հեռանկարի հետ, ըստ վորի տնտեսական նոր քաղաքականությունը «սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը կառուցելու» հնարավորություն կտա մեզ։

Այս «պերմանենտ» անհուսությունն ի՞նչպես համաձայնեցնենք լենինի, որինակ, հետեւյալ խոսքերի հետ։

«Սոցիալիզմն արդեն այժմ հեռավոր ապագային, կամ վորեւ վերացական պատկերի, կամ վորեւ սըրլապատկերի հարց չե։ Սըրբապատկերների նկատմամբ մենք մնացել ենք մեր հին, խիստ վասա կարծիքին։ Մենք սոցիալիզմը ներս ենք քաշեւ

առորյատ կյանքի մեջ և այստեղ և,
 վոր պետք ե գլուխ հանենք: Ահա
 թե ինչն ե մեր որվա խնդիրը, ահա
 թե ինչն ե մեր դարաշրջանի խըն-
 դիրը: Թույլ ավեր ինձ վերջացնե-
 լու՝ արտահայտելով այն վստահու-
 թյունը, վոր ինչքան ել այդ խըն-
 դիրը գժվար լինի, ինչքան ել այն
 նոր լինի մեր առաջվա խնդիր հետ
 համեմատած և վորքան ել այն չառ
 գժվարություններ ե սկատառում
 մեղ, —մենք բոլորս միասին, վաչ
 թե վազը, այլ միքանի տարվա ըն-
 թացքում, մենք բոլորս միասին
 կլուծենք այդ խնդիրը՝ ինչպես ել
 լինի, այնպես վոր նեղական Ռու-
 սաստանից կստացվի սոցիալիստա-
 կան Ռուսաստան» (տե՛ս Հո-
 տոր ՀՀ ՀՀ 366):

Ի՞նչպես համաձայնեցնենք այդ
 զորքամնենոտ» անլուսությունը լենինի,
 որինակ, հետեւալ խոսքերի հետ,

«Որոք պետության իշխանու-
 թյունն արտադրության բոլոր խո-
 չոր միջոցների վրա, պետության
 իշխանությունը պրոլետարիատի
 ձևոքին, այդ պրոլետարիատի դա-
 շնքը չառ միլիոններ կազմող
 մարդ ու մանրագույն զյուղացինե-
 րի հետ, այդ պրոլետարիատի հո-
 մար զյուղացիությանը զեկալարե-
 լու դորձն առլահովելը և այն—
 միթե այս այն ամենը չե, ինչ հար-
 կավոր ե, վորպեսզի կոռպերացիա-
 յից, միմիայն կոռպերացիայից, վոր
 մենք առաջ քամահքում ելինք վոր-
 ուես չարչիտկան կոռպերացիա, և
 վորը վորոշ տեսակետից իրավունք
 ունենք քամահքելու այժմ, նեղի
 պայմաններում նույնպես, —միթե
 պայմաններում չե լիակա-
 տար սոցիալիստական հասարակու-
 թյուն կառուցելու համար: Այս
 գուևս սոցիալիստական հասար-
 կության կառուցում չե, բայց սա

այն ամենն եւ, ինչ անհրաժեշտ եւ
և բավական այդ կառուցման հա-
մար» (տե՛ս հ. ԽԽՎII, էջ 392):

Պարզ եւ, վոր այստեղ չկա ու չի եւ
կարող լինել վոչ մի համաձայնեցում:
Ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափո-
խությունը» բացասումն եւ պրոլետա-
րական հեղափոխության լենինյան թեո-
րիայի, և ընդհակառակը—պրոլետարա-
կան հեղափոխության լենինյան թեո-
րիան բացասումն եւ «պերմանենտ հե-
ղափոխության» թեորիայի:

Մեր հեղափոխության ուժերին ու
ընդունակություններին չհավատալը,
ուսւաստանյան պրոլետարիատի ուժե-
րին ու ընդունակություններին չհավա-
տալը—այս եւ «պերմանենտ հեղափո-
խության» թեորիայի յենթահողը (под-
почва):

Մինչև այժմ սովորաբար նշում եյին
«պերմանենտ հեղափոխության» թեո-
րիայի մի կողմը—գյուղացիական շարժ-
ման հեղափոխական հնարավորություն-

ներին չհավատալը: Այժմ, արդարացի
լինելու համար, այդ կողմն անհրա-
ժեշտ եւ լրացնել մյուս կողմով—իու-
սաստանի պրոլետարիատի ուժերին ու
ընդունակություններին չհավատալով:

Ինչո՞վ եւ տարբերվում ընկ. Տրոց-
կու թեորիան մենչելիոմի սովորական
թեորիայից այն մասին, թե սոցիալիզ-
մի հաղթությունը մի յերկրում, այն
եւ հետամնաց յերկրում, անհնարին եւ
տուանց պրոլետարական հեղափոխու-
թյան նախապես հաղթելուն «Արևմտյան
Յելլուպայի հիմնական յերկրներում»:

Հստ եյության՝ վոչնչով:

Տարակույսներն անհնարին են: Ընկ.
Տրոցկու «պերմանենտ հեղափոխու-
թյան» թեորիան մենչելիոմի այլատե-
սակությունն եւ:

Վերջին ժամանակներս մեր մամու-
լում յերևան են յեկել փոտած դիվանա-
կեաներ, վորոնք ջանում են «պերմա-
նենտ հեղափոխության» թեորիան անց-
կացնել վորպես լենինիոմի հետ համա-

տեղելի ինչ-վոր մի բան: Իհարկե, առ սում են նրանք, այդ թեորիան անպետք դուրս յեկալ 1905 թվականին: Բայց ընկ: Տրոցկու սխալն այն ե, վոր նա այն ժամանակ առաջ եր վագել, փորձելով 1905 թվականի իրադրության նկատմամբ կիրառել այն, ինչ վոր այն ժամանակ չեր կարելի կիրառել:

Բայց հետադայում, ասում են նրանք, որինակ՝ 1917 թվականի հոկտեմբերին, յերբ հեղափոխությունը կարողացել եր լիովին հասունանալ, ընկ: Տրոցկու թեորիան երբ թե միանդամայն իր տեղում դուրս յեկավ: Դժվար չե կուածել, վոր այդ դիվանադեսներից ամենագլխավորն ընկ: Ուագեկն ե: Զե՞ք հաճի արդյոք ունկընդդրել.

«Պատերազմն անդունդ փողեց հող նվաճելու ու հաշտության ձգտող դյուղացիության և մանր-բուրդուական կուսակցությունների մի-

ջն: պատերազմը դյուղացիությունը հանձնեց բանվոր դասակարգի և նրա ավանդաբարդի՝ բոլցեկիների կուսակցության զեկավարությանը: Հնարավոր դարձավ վո'չ թե բանվոր դասակարգի ու դյուղացիության դիկտատուրան, այլ դյուղացիության վրա հենվող բանվոր դասակարդի դիկտատուրան: Այն, ինչ վոր Ռոզա Լուքսեմբուրգն ու Տրոցկին 1905 թվականին առաջադրում եյին լենինի դեմ (այսինքն «պերմանենտ հեղափոխությունը»): Ի. Սով.), իրականում պատմական զարգացման յերկրորդ ետակ դուրս յեկավ» (տե՛ս «Правда» 1924 թ. փետրվարի 21, № 42):

Այստեղ յուրաքանչյուր խոսքը խարդախումն ե:

Ճիշտ չե, թե պատերազմի ժամանակ «հնարավոր դարձավ վո'չ թե բանվոր դասակարդի ու դյուղացիության

դիկտատուրան, ոյլ դյուզացիության վրա հենվող լանջոր գասակարդի դիկտատուրան»: Իրապես 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունն եր սրբութարիատի ու դյուզացիության դիկտատուրայի իրականացումը, վոր յուրատեսակ կերպով միահյուսված եր բուրժուազիայի դիկտատուրայի հետ:

Ճիշտ չե, թե «պերմանենտ հեղափոխության» թեորիան, վորի մասին ընկ: Ռադեկն ամոթխածությամբ լուսաւ ե, 1905 թ. Ռողա Լուքսեմբուրգն ու Տրոցկին են առաջարել: Իրապես այդ թեորիան առաջարել ելին Պարլուսն ու Տրոցկին: Այժմ տասն ամիս անց, ընկ: Ռադեկն ուղղում ե իրեն՝ հարկավոր համարելով հայհոյել Պարլուսին «պերմանենտ հեղափոխության» համար (տե՛ս նրա հոդվածը Պարլուսի մասին «Պրավա»-յում): Բայց արդ պարությունը պահանջում ե ընկ: Ռադեկից, վոր հայհոյանքի յենթարկվել

նաև Պարլուսի կոմպանիոնը — ընկ: Տրոցկին:

Ճիշտ չե, թե 1905 թվի հեղափոխության կողմից դեն չպատճած «պերմանենտ հեղափոխությունը» ուղիղ դուրս յեկավ «Պատմական գարզացման յերկրորդ ետապում», այսինքն Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ: Հոկտեմբերյան հեղափոխության ամրող ընթացքը, նրա ամբողջ զարդացումը ցույց տվին ու ապացուցեցին «սկերմանենտ հեղափոխության» թեորիայի լիակատար մնանկությունը, նրա լիակատար անհամատեղելիությունը լենինիզմի հիմունքների հետ:

Քաղցրիկ ճպոերով ու փոտած դիմանագիտությամբ չես ծածկի այն լայնեցափ անդունդը, վոր ընկած ե «պերմանենտ հեղափոխության» թեորիայի և լենինիզմի միջև:

III

ԲՈԼԵՎԱԿԻԿԱՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՄԻՔԱՆԻ
ԱԴԱՐՁԱԾԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱ-
ՄԱՆԱԿԱԾՐՁԱՇՈՒՄ

Վորովեսզի հասկանանք բոլշեկիների՝
Հոկտեմբերի նախապատրաստման ժա-
մանակաշրջանի տակարգան, անհրա-
ժեշտ է, վոր պարզենք մեզ համար
այդ տակտիկայի գոնե միքանի առանձ-
նապես կարևոր առանձնահատկություն-
ները։ Այդ առավել ևս անհրաժեշտ է
այն պատճառով, վոր բոլշեկիների
տակտիկային վերաբերող բազմաթիվ
բրոցյալներում հաճախ շրջանցվում են
հենց այդ առանձնահատկությունները։
Այդ ի՞նչ առանձնահատկություններ
են։

Առաջին առանձնահատկությունները են՝
թե լսես ընկ։ Տրոցկուն, կարելի յէ
66

կարծել, թե Հոկտեմբերի նախապատ-
րաստման պատմությունն ունի ընդու-
մենը յերկու ժամանակաշրջան—հետա-
խուզության ժամանակաշրջան և ապրո-
տամբության ժամանակաշրջան, իսկ
ինչ գրանից ալելլի յէ, այն ի չարեն
և։ Ի՞նչ բան է 1917 թվի ապրիլյան
մահի ֆեստացիան։ «Ապրիլյան մանի-
ֆեստացիան, վորն ալելլի «Ճախ» ըն-
թացավ, քան հարկն եր, մի հետախու-
զական արտելը եր՝ ստուգելու համար
մասսաների տրամադրությունն ու
փոխհարաբերությունները նրանց ու
